



# ԱԶԱՏ ԽՕՄՔ

ՇԱԲԱԹ 24 ՆՈՅԵՄ. 1906. ԱԼԵԲՍԱՆԴՐԻԱ

Տ. Ե. Ժ. ՄԻՈՒԹԻԻՆԸ

Գեղեցիկ լուր մը մեզի կը հասնի. կ'երևայ որ խումբ մը երիտասարդներ սրտած են վերակազմել Տիգրան Երկաթ Ժողովրդային Միութիւնը, բոլորովին նոր հիման մը վրայ, անոր տալով բոլորովին ժողովրդային հանգամանք մը:

Ինչպէս յայտնի է այդ Միութիւնը մինչև հիմակ Վեր. Հնչակեաններու կեդրոն մըն էր միայն և այս պատճառաւ խոտելի և դրեթէ ատելի Դաշնակցականներուն՝ որոնցմէ ամէնէն մոլեռանդները նոյնիսկ Նուպար Փաշա փողոցէն չէին անցներ Միութեան մօտեցած չըլլալու համար: Նոյն այդ Հնչակեան հանգամանքը նմանապէս հեռու պահած էր այդ կեդրոնէն ո՛չ նուազ կարևոր կուսակցութիւն մը՝ «Չեղոքեան» կուսակցութիւնը: Ու ա՛հա այս պատճառաւ Տիգրան Երկաթ Միութիւնը օրէ օր կը տուայտէր և ուժէ կ'իյնար հակառակ Տ. Շաւարշ Հովիւեանի անձ-

նուէր և եռանդուն ջանքերուն:

Արդ, այժմ կ'երևայ որ կարելի եղած է համաձայնութիւն մը առաջ բերել Վեր. Հնչակեան, Դաշնակցական և չէղոք երիտասարդներու միջև որոնց նախաձեռնութեամբ այդ Միութիւնը կորսնցունելով իր տարամերժ և միակողմանի հանգամանքը պիտի ըլլայ իրաւամբ ժողովրդային միութիւն մը, զերծ կուսակցամտրական հակումներէ:

Մենք բոլոր ուժով կը ծափահարենք այն երիտասարդները որ այս գեղեցիկ գաղափարը յղացած են և կ'աշխատին զայն իրականացնելու: Անոնք կրնան վստահ ըլլալ թէ մեզի հետ Ալեքսանդրիոյ բոլոր հայութիւնն ալ մասնակից է և անշուշտ յօժար՝ իր բարոյական ու նիւթակշն օժանդակութիւնը նուիրելու:

---

### ԱՐՄԵՆԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

---

Ինչպէս նախորդ թիւով գրած էինք Տ. Արմենեան շարժումս մէջ Քահիրէ հրաւիրուած էր հոն ևս ներկայացում մը կազմակերպելու համար: Քահիրէի մէջ սակայն ամէն կողմէ փափաք յայտնուած է որ փոխանակ մէկի, ներկայացումներու շարք մը տան Տէր և Տիկին Արմենեան և գործին յաջողութիւնը ապահովելու համար խոստացուած է ամէն աջակցութիւն: Առաջին ներկա-

յացումը տեղի պիտի ունենայ գեկտեմբեր 16, կիրակի ցերեկ, էզպէքիէի թատրոնին մէջ: Անկէ առաջ, գեկտեմբեր 2ին Տէր եւ Տիկին Արմենեան Ալեքսանպրիայ մէջ պիտի տան ուրիշ ներկայացում մը, մասնակցութեամբ երկսեռ ամաթէօրներու:

Կը լսենք թէ Արմենեան դիտաւորութիւն ունի այս անգամ ներկայացնելու ռուսահայ ծանօթ գրագէտ Շիրվանդատէի մէկ խիստ յուզիչ և հագեքանական սրամը:

Առ այժմ այսչափ անխորհրդապահութիւն բաւական է:

### ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Վերջին պահուն ստացանք հետեւեալ շրջաբերական-այցաքարտը, զոր ամբողջութեամբ կ'արտատպենք.

ՍԱՐԳԻՍ ԳԱՐԱԿԻԻՋԷԼԵԱՆ

Մանտօգէտ (1) Ուտուցիչ

Հայերէնի, Յրտեսերէնի և Անգղիերէնի

Աղեքսանդրիա

Դասատուներու այն ոովին պահուն որ այժմ ճարակած է Պօղոսեան վարժարանի մէջ, այս շրջաբերական-այցաքարտը կոչուած է մեծ ընդունելութեան . . . որակը:

Հարցում մը սակայն:

Արդեօք այդ Սարգիս Գարակիւզէլեանը որ  
և է արեւնակցական, խնամիական կամ նոյնու-  
թեան կապ մը ունի՞ այն Սարգիս Գարակիւզէլ-  
եանին հետ զոր մինչեւ այսօր ճանչցած ենք  
Քէօմիւրճի Պատուելի շքանուան ներքե...:

Լուրջ պատճառներ ունինք տարակուսելու,  
որովհետեւ մեր սոյն այդ Պատուելին ո՛չ թէ մի-  
այն մասնագէտ է Հայերէնի, Ֆրանսերէնի եւ  
Անգղիերէնի, այլ միանգամայն Յունարեւնի, Տաճ-  
կերէնի, Ռուսերէնի և նոյն իսկ, եթէ մեր յի-  
շողութիւնը անզն է, Վօլաբիւքի, թող զպատ-  
մութիւն, դաշխարհագրութիւն, զիրագիտութիւն,  
զալճէսք, զընագիտութիւն, այլովքն հանդերձ...

(1) Վրիպակ.

Տպագրական և նոյն իսկ ճակատագրական  
դժբախտութեամբ մը որ կը ծնի սա անհերքելի  
իրողութենէն որ հայ ալփապետին ա և տ դի-  
գիրերը աղէտալի շփոթութեան մը տեղի տալու  
աստիճան իրարու կը նմանին, մասնագէտը վե-  
րածուած է մասնագէտի, մեր կամքէն բոլո-  
րովին անկախ պատճառներով: Մեր խորին ցա-  
ւակցութիւնը Լ անկեղծ չքմեղանքները ներկա-  
յացնելով հանդերձ այս վրիպակին անմեղ զո-  
հին, չենք կրնար արգիլել ինքզինքնիս խոնար-  
հաբար իրեն դիտել տալէ թէ այս սխալին բուն  
հեղինակը և պատասխանատուն հայ այբուբենին

գտիչ ու հնարիչ Մեծն Մեսրոպըն ինք իսկ է, որ ու հ իցէ կապ շունի այն Փոքր Մեսրոպին հետ որ վերջերս ժուռ սկսած է գալ Ալեքսանդրիոյ փողոցներուն մէջ Նորատունկեան անունին աակ, ի խոյզ եւ ի խնդիր ուսուցչական կորսուած պաշաօնի մը, և որուն հայ այբուբէնին միայն վեց գիրը ճանչցուցած են այս օրերս:

### Տ. Մ. ԻՆ ՊԱՐԱԳԱՆ

Յոյցիկ մը տեղի ունեցած է կիրակի օր ի նպաստ Մեսրոպ Նորատունկեանի անկարողութեան, որ ինչպէս յայտնի է դպրոցատէր հասարակութեան, վեց ղիշէ բաղկացեալ ծանուցագրով մը, որուն մէջ կարելի եղածին չափ մանրամասնօրէն ցոյց տրուած էին իր հրաժարեցուցման պատճառները, դադրեցուցուած էր այն ուսուցչական պաշաօնէն որուն կառչած կը մնար շուրջ տասը տարիներէ ի վեր: Զարմանալի գուդադիպութեամբ մը, նորակսգմ հոգաբարձութեան անդամներէն մին, շուրջ 40 սակի փոխառութիւն մը կնքած, ոմանք կ'ըսեն մկրտած, է եղեր պաշաւանակ ուսուցչին հետ, և իբր տոկոս իր անձնուէր ու յուսահատական պաշտպանութիւնը հուշիբեր է կոշուօեալ պաշաօնին նախկին օնփականատիրոջը: Ըսողներ ալ կան, ինչե՛ր չըս-

ուրբ ասանկ ատեն (մենք, փառք Աստուծոյ, ըսողներէն ենք) թէ ցոյցիկին մասնակցող մարդիկները հնչուն և փայլուն ապացոյցներ ստացած են, Տիար Նորատունկեան Մեսրոպէ, իր ուսուցչական կարողութեան մասին, ապացոյցներ զորս այնքան խնայասիրտբար հաւաքուած էր տարիներու ընթացքին մէջ, և զորս իր իսկ ձեռքով շուայլօրէն հրապարակ կը հանէ այժմ:

Յաւալի է մեզ հաստատել թէ այդ ցոյցիկը վիժած է, հակառակ վերոյիշեալ հոգաբարձուին մանկաբարձական յուսահատ ճիղերուն . . . , և այսպէս պ. հոգաբարձուն ոչ միայն չէ կրցած վճարել տոկոսը, այլ միչտ կը մնայ պարտական այն մայր գումարին, որուն նկատմամբ որդիական անսահման սէր ու ազապատանք կը տածէ Նորատունկեանն Մեսրոպ . . . :

«Ո՛հ, մօր մը սէրը, սէ՛ր զոր ոչ ոք կը մտազայ»

Ինչպէս կ'ըսէ միւսը որ ոչ ուրիշ ոք է բայց Մեծն Հիւկօ:

Եւ եթէ այսպէս շարունակէ, կ'ըսուի թէ մայր գումարը յղի է և դատ մը պիտի ծնի . . .

Ի՛նչ ձիէրկարաուք բաներ, Աստուած իմ:



ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Մեր համակրելի բարեկամ ու աշխատակից Վահան Թէքէեան, այսօրուրնէ իսկ, ի Գահիրէ, կը սկսի հրատարակել գրական և ազգային շաբաթաթերթ մը, «Նոր ժամանակներ» նշանակալից տիպոգրաֆ, որուն պիտի աշխատակցին բոլոր անդամները այն գրական «աստեղախումբին» որ այժմ գոթի է իր ամբողջութեամբ կը փառի բուրգերու շուրջ և նեղօսի վերև. հոն պիտի երևան, իրենց բոլոր պայծառութեամբ և ինքնայառուկ փառքով, հայ դպրութեանց և լրագրութեան հին ու նոր ներկայացուցիչները, Ա. Արվիարեան, Լևոն Բաշաբան, Տիրան Քէլէկեան, Յ. Արվիար, Միր-Երօ, Միքայէլ Կիւրճեան, Երօտ Էյլն: Վստահ ենք որ ընթերցող հասարակութիւնը, որուն ճաշակը խաթարուած է Ազատ Բեմի և «Լուսաբեր»ի ընթերցումներէն, խանդավառ ընդունելութիւն մը պիտի ընէ վարպետ ձեռքերէ պատաստուած գրական այս խորտիքին:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Արդի քաղաքականութեան մասին ճշգրիտ տեղեկութիւն մը առնելու համար աչքէ անցուցինք նոյեմբեր 21 չորեքշաբթի օրուան «Լրագր»ը ուր կարգացինք, Վերջին Լուրերու բաժնին մէջ, հետևեալը:

«Արտաքին փոխառութեան Պարսիկ ժողովրդին դիւրութեան համար դեռ չստորագրուեցաւ փոխատութեան Անկլո-Ռուս պայմանագիրը, բայց ներքին փոխառութեան համար ալ ստակ չհաւաքուիր:»

Այս լուրը ձեռնհաս և բարեացակամ անձերէ կազմուած յատուկ Յանձնախումբի մը հաղորդեցինք, որպէսզի իմաստը հասկնալով մեզի բացատրէ տեղեկագրով մը:

«Լրաբեր» քիչ օրէն կը թեւակոխէ իր ութերորդ տարին:

Յաջողութիւն և յարատևութիւն:

Զմուռնանք դիտել տալ թէ հակառակ վերոյիշեալ լուրին, քաղաքական հորիզոնը միշտ պայծառ է և յուսալից:

---

#### ՄԱՆՐՈՒՔ ԼՈՒՐԵՐ

---

Յառաջիկային լոյս կը տեսնէ «Զեթուն» (չըկարպալ Զէյթուն) մանկավարժական, դրական, ըսպառնական և յայտնութենական շաբաթաթերթը: Կ'իմանանք թէ սոյն պարբերական և անձնօգուտ թերթին ինքզինք անօրէն կարգած է Պօղոսեան վարժարանի նախկին աւա՛ղ փառացս անցաւորի տնօրէն Տ. Սմբատ Բիւրատու Թերթին աշխատակիցներուն մէջ մասնաւորաբար կը յիշուի հինբրէն՝ էջ շէյխ Աբու-սահլ և նորերէն՝ Տ. Մեսրոպ

Նորատունկեան, իր նախկին ստորադասատուն որ  
ի գիր պիտի առնէ պէտք եղած տառասխալներով,  
իւր տաճանայ պանդխտութեան յիշատակներն  
ի Պօղոսեան վարժարան, Մագումէն մինչև Ելից  
Կիրքը «Զեթուն» խիստ հետաքրքրաշարժ, այժ-  
մէական և տրամաթիք թերթօն մըն ալ պիտի  
ունենայ «Քառսուն. սոկիս կամ ուսուցչական պաշ-  
տօնս» տիտղոսով, Հեղինակութիւն՝ Մեսրոպ Նորա-  
տունկեանի (ուղղագրական սխալներու իրաւուն-  
քը վերապահուած, ամէն երկիրներու համար,  
Շուէտ և Նորվեկիա մէջը ըլլալով):

Մ Ի Բ Է Ի Ս Ի Ր Ա Ր Կ Ա Մ Ը

(5)

( Ե Ր Գ Ի Ծ Ա Կ Ա Ն Վ Ի Պ Ա Կ )

Գ

(Շար. 26րդ թիւէն)

Երազին մէջ տեսած էր թէ ձեռքը խոշոր կաղամբ  
մը բռնած՝ Սրբուհիին այցելութեան պացած և կաղամբը  
խրրի ծաղկեփունջ մը, նուիրած էր անոր. նոյն միջո-  
ցին Սարգիս էֆէնտի ներս մտած էր և կաղամբը տես-  
նելուն՝ յանկարծ զող էլած և սկսած էր օղին մէջ բարձ-  
րանայ, առոր վրայ Միքէ կաղամբը առած և նետած էր  
Սարգիս էֆէնտիին հասէն, որ մէկէն գետին տապա-  
լած էր:

Միքէ առտուն կանուխ երազը պատմած էր մեծ  
մօրը, որ ուշադրութեամբ մտիկ ընելէ հաքը, որոշ եղ-

բակացութեան մը չէր կրցած հասնիլ և միայն սա տար-  
տամ մեկնութիւնը տուած էր:

-Յավրուս, էրազզ խեր է ըսեմ՝ խեր չէ, գէշ է  
ըսեմ՝ գէշ չէ. լահանան թառլայէն ափր մի, չէ նէ,  
գեանեն գտար. գեանէն գտար նէ ուրախութիւն է,  
թառլայէն բրցուցիր, նէ՛ ցաւ է . . .

Դժբախտարար Միքէ չէր կարող յիշել թէ կաղամբը  
ինչպէ՞ս ձեռք անցուցած էր, արտէ՞ն բրցուցած էր, թէ  
գեանէն գտած էր:

-Սարգիս էֆէնտիին հաժան էլլալը, շարունակած  
էր մեծ մայրը, մեծութիւն է ըսեմ՝ մեծութիւն չէ, թե-  
թեութիւն է ըսեմ՝ թեթեութիւն չէ. . .

Ու այսպէս Միքէ չէր կրցած իր երազին լուծու-  
մը գտնել:

Այսուհանգերձ, ամէն փրահարներու պէս լաւա-  
տես, ինք իրեն նպաստուոր մեկնութիւն մը տուած էր:

-Կաղամբը, մտածած էր, Տիրանին թերթն է որ  
այսօր Սարգիս էֆէնտիին դէմ յօդուածը պիտի հրա-  
տարակէ, Սարգիս էֆէնտիին օդին մէջ բարձրանալը  
հիմակուան վիճակին պատկերն է, իսկ կաղամբին տես-  
քէն դող ելլիլը և անոր հարուածէն գետին տապալիլը,  
յօդուածին սոսաջ բերելիք տպաւորութիւնը ցոյց կու-  
տայ:

Եւ այս մեկնութիւնէն գոհ, Միքէ մինչև իրիկուն  
երջանիկ ապրեր էր:

Իրիկուան դէմ միտքը դրաւ այցելութիւն մը տալ  
Կիսկատարեանենց, որոնց տունը չէր գացած ազնտաւոր  
նշանտուքէն ի վեր:

Նախազգացում մը ունէր թէ կարեւոր, վճռական  
բան մը տեղի պիտի ունենար նոյն օրը, այդ տան մէջ

և հաւանօրէն թերթին մէջ հրատարակուելիք յօդուածին ազդեցութեամբը:

Հէ՛գ սիրահարը աւուր պատշաճի արդուզարդը ընելէ ետքը և պարագային յարմար մեղամաղձնկ՝ բայց ոչ ընկճեալ արտայայտութիւն մը տալով գէմքին ընդհանուր կեցուածքին, անյօդդողգ քայլերով ուղղուեցաւ Օր. Սրբուհիի տունը:

Սրբուհի այդ օր կը սպասէր իր նշանածին՝ Սարգիս էֆէնտիի՝ որ ըստ պայմանագրութեան՝ կիրակի ցերեկներու ճաշէն դատ, երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ իրկուսները, իրաւունք ունէր մէկ երկու ժամ դալ տեսակցելու իր խօսեցեային հետ, ի ներկայութեան ազջիւան մօր, հօր և այլ նեղացուցիչ պարագաներու:

Սրբուհի նուրբ և վայելչագեղ հասակով սիրուն ազջիկ մըն էր, զուարթ ու խօսուն սև աչքերով, հեգնող ու գրգռիչ քիթով մը և հնչտասէր չրթունքներով: Միքէի հետ իր սիրաբանութիւնը պարզ ժամանց մը նկատած էր միշտ և երբէք մտքէն չէր անցուցած թէ այդ երիտասարդը լրջօրէն կրնար միտքը դրած ըլլալ իր հետը ամուսնանալու:

Երբ սպասուէին եկաւ իմաց տալու թէ միւսիւ Միքէն եկած է այցելութեան՝ Սրբուհի ուրսխութեան ճիգ մը արձակեց և վազեց զինքը զիմուտրելու:

- Աֆէրի՛մ, միւսիւ Միքէ, ըսաւ յանգիմանական ձայնով մը, աս վայլե՞ց ըրածդ, այսչափ օրէ նշանուեր եմ և զեռ նոր շնորհաւորութեան կուգաս: Պատիժի արժանի ես, շաբար չպիտի տամ քեզի:

Եւ Սրբուհի սկսաւ քահքահ խնդար:

Միքէ բոլորովին տարբեր ընդունելութիւն մը կ'ենթադրէր գտնել, հանդիսական, գրեթէ եղբրական ընդունելութիւն մը: Կը յուսար որ Սրբուհի զինքը

տեսած ատեն դոյնը պիտի նետէր, զողալ պիտի սկսէր  
և սա տեսակ քանի մը բառեր պիտի կոկմար. «Ո՛հ,  
ներում, Միքէ, թշուառ մըն եմ, սնարժան արարած  
մը . . . » եւ այլն:

Նոյնիսկ կը մտածէր որ թերևս Սրբունին յուզու-  
մէն մարէր ու իր թեկուն մէջ իյնար:

Ու ահա՛ բոլորովին հակառակը տեղի կ'ունենար,  
աղջիկը հին օրերու չարածնի թեթևութեամբը զինքը  
կ'ընդունէր, իբր թէ ունէ ծանրակշիռ դէպք մը պա-  
տահած չըլլար:

Երկուքը միասին մտան սալօնը:

- Ի՞նչ ըսիր նշանուելուս. հարցուց Սրբունի:

- Ի՞նչ ըրի, պատասխանեց Միքէ աջ ձեռքը տա-  
նելով, ժիւղին երկրորդ կոճակին վրայ որուն տակ կ'են-  
թաղէր որ սիրտը կը գտնուէր... Ի՞նչ ըրի...

Աղջիկը չկրցաւ իր ծիծաղը զսպել երիտասարդին  
ողբերգական ձեւերուն հանդէպ:

Այս ծիծաղը բոլորովին յուզեց հէզ սիրահարը:


- Կ'աղաչեմ Սրբունի ըսաւ, գրեթէ լալազին  
ձայնով մը, այդ ծիծաղներովդ աւելի մի խոցոտեր  
սիրտս որ արդէն օրերէ ի վեր կ'արիւնի:

Սրբունի զարմանքով Միքէի երեսը նայեցաւ. Ինչ-  
պէս ըսինք երբեք չէր կրնար երևակայել որ իր նշան-  
տուքը կրնար ցաւ պատճառել երիտասարդին. բնդհա-  
կառակը կը կարծէր որ Միքէ՛ ուրախ պիտի ըլլար ի-  
մանալով որ իր բարեկամունին հարուստ, փայլուն  
զիրքի տէր մէկու մը հետ կ'ամուսնանայ:

Սրբունի սրտի խնդիրները կը նկատէր իբրև զքո-  
սանք մը, պարզ ժամանց մը որ երբեք կապ չկրնար  
ունենալ ամուսնութեան պէս լուրջ, էական գործի մը  
հետ:

- Սիրելը ուրիշ բան՝ ամուսնանալը ուրիշ բան:
- Այս էր իր նշանաբանը:
- Ուրեմն լրջօրէն տխրեցա՞ր նշանաուրս իմանալով հարցուց իր նախկին սիրահարին:
- Մեռնելու աստիճան, պատասխանեց Միքէ ահուկի պաղարիւնութեամբ մը:
- Կը յուսամ թէ որս չպիտի պահես ինձի դէմ:
- Քեզի դէմ երբեք, բայց...
- Բայց ի՞նչ, հարցուց Սրբուհի հետաքրքիր ու ժպտուն:
- Վրէժս պիտի լուծեմ Սարգիս էֆէնտիէն:
- Վրէժ՞ժպ պիտի լուծես:
- Ո՛չ թէ պիտի լուծեմ, այլ նոյնիսկ լուծեցի, պատասխանեց Սիքէ ժպիտով մը որուն ջանաց կարելի եղածին չափ չարաշուք արտայայտութիւն մը տալ:

(Շարունակելի)



ԱԶԴ

Երիտասարդ մը պատրաստ է իբրև այցելու սովորակալ պաշտօն ստանձնել վաճառականի քով: Կարող է հաշիւները բռնել հայերէն, ֆրանսերէն կամ Անգլիերէն և միանգամայն առևտրական թղթակցութիւններ կատարել այդ երեք լեզուներով: Գոհացուցիչ պայմաններ:

Դիմել Ազատ Խօսքի խմբագրատունը ուր Սթամպուլ թիւ 16:

---

---

**ՅԱՒԱՂԻ ԴԵՊՔ ՄԸ**

Շա՛տ ազնիւ, շա՛տ համակրելի, շա՛տ պարկեշտ են մեր բաժանորդները, միշտ կը շարունակեն չվճարել իրենց բաժնեգինը, հակառակ որ «Ազատ Խօսք» այսօր կը թեւակոխէ իր 28րդ թիւը, որով միայն 12 թիւ կը մնայ երկրորդ շրջանը աւարտելու:

Եւ զարմանալի՛ բան. մեր բաժնեգինը կանխիկ ըլլալով հանգերձ, տակաւին Գահիրէ և գաւառները բաժանորդներ ունինք որոնք առաջին չաջանի լրացած բաժնեգինը անգամ չեն զբրկած:

Անհաւատալի անշուշտ, եւ ոտկայն տխուր իրականութիւն մը:

Մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք ուր որ անկ է:

---

**ԺՊԻՏ**

Գեղեցիկ օրիորդ մը, հազիւ տամնութը տարեկան, Սարաֆիէ՛ մեր հայ կերպասավաճառներէն մէկուն խանութը կ'երթայ կերպաս գնելու:

Յետ մանրակրկիտ քննութեան, վերջապէս կերպասի մը կը հաւնի:

- Բանի՞ է ասոր մեղքօն կը հարցնէ:

- Մեղքօն համբոյր մըն է, կը պատասխանէ կնահաճոյ խանութպանը:

- Շատ աղէկ, կը պատասխանէ օրիորդը, տասը մեղքօ կ'արեցէ՛ք և տուն զրկեցէ՛ք, հաշիւն ալ միասին . . . մեծ մայրս պիտի վճարէ:

---





"ԱՋԱՏ ԽՕՄՔ" ի Ղալիանները

- ԱՋԱՏ ԽՕՄՔ - ՊԵ ՀՐԵՍԱՐԿՈՒՄ ԵՄԲԱՐ ՕՓԵՐԸ

Եղիլոսոյի համար բաժնեկիցէ

40 ԲԻՒՇ 40 ՂՐԵ ԵՂՁ

20 " 20 " "

- ԱՐՏԱՐԶԱՆՆԵՐ

ԵՐՐՈՍ 40 ԲԻՒ 10 ՏՈՒՐ

ՈՒՌԱՅ " " 4 ԲՈՒՄԵՆ

ԱՍԵՐԻՍ " " 2 ՏՈՒՐ

Բաժանորդացուրիւնը կանխիկ

ՀԱՏԸ 1 ՂՐԵ ԵՂՁ

"ԱՋԱՏ ԽՕՄՔ" ի համար բաժնեկիցին կամ  
որ և է գրութիւն պետք է ուղղել հե-  
տեւայ հասցէին՝

H. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE. (EGYPTE)

Մահացումներ կրեցանուի՞ մահուան  
պայտաններով

Պատասխանատու . Խմբագիր Ե. ՕՏԷԱՆ

Տպագր. ֆոնդը " ԱՋԱՏ ԽՕՄՔ" ԵՂՁ. Ալեքանդրիա